ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ 1870—1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Անդրկովկասի «մուսուլմանական բարձր դասի, նաև հայ մելիքների հողերի վրա բնակվող շինականների հողային կարգավորման մասին» 1870 թ. մայիսի 14-ի Կանոնադրությունն անմիջականորեն չշոշափեց էջմիածնի վանքի կալվածքների և դրանցում բնակվող գյուղացիների «հողային կարգավորման» հարցը։

Հետազոտողներից ոմանք միայն արձանագրել են այս փաստը, իսկ մյուսները (Վ. Ռշտունի, Մ. Եգանյան) ուշադրություն են դարձրել Կանոնադրությունը նաև եկեղեցու կալվածքների վրա տարածելու կովկասյան իշխանությունների 1880 թ. հերթական փորձի և այդ առթիվ Գևորգ IV կաթողիկոսի ընդդիմության վրա։ Ընդ որում, Վ. Ռշտունին դրան անդրադարձել է էջմիածնի կալվածքային անձեռնմխելիությունը պաշտպանող «Մեղու Հայաստանի» թերթի դիրքորոշումը պարզելու կապակցությամբ[1], իսկ Մ. Եգանյանը քաղվածաբար վկայակոչել է 1880 թ. մայիսի 20-ին Կովկասի փոխարքայի գլխավոր վարչությանը Գևորգ IV-ի հասցեագրած նամակը, իրեն հետաքրքրող մեկ այլ խնդրի՝ հողային ռեֆորմի նկատմամբ հայ կալվածատերերի և հոգևորականության վերաբերմունքը բացահայտելու առնչությամբ[2]։ Հիմնականում այդ նամակի շուրջն է ծավալվում նաև ժամանակակցի «էջմիածնի գյուղերը» վերնագրով թղթակցությունը հիշյալ թերթին[3]։

Փաստական նյութի սղությունը ուսումնասիրողներին հնարավորություն չի տվել առանձին կամ գոնե ռեֆորմի հարցերին զուգահեռ քննելու եկեղեցապատկան շինականների «հողային կարգավորման» պաշտոնական նախագծումները, էջմիածնի դիրքն ու գործի ընթացքը։ Այդ նույն պատճառով, խնդրի որոշ կարևոր մանրամասներ էլ շրջանցվել են 1870 թ. ռեֆորմին վերաբերող ընդհանուր, երբեմն մեզ հետաքրքրող հարցի առումով հապճեպ թվացող դիտողություններով։

Հետազոտողները Հայաստանում գյուղացիական ռեֆորմի յուրահատկություններից մեկը համարել են այն, որ այստեղ, ի տարբերություն Ռուսաստանի, շինականների «հողային կարգավորման» օրինագծերը նախապատրաստվեցին ու կազմվեցին առանց «բարձր դասի» մասնակցության։ Իսկ ինչպե՞ս վերաբերվեցին դրան կալվածատերերը։ Վ. Ռշտունին գրել է. «1870 թ. Կանոնադրության նախագծերի կազմմանը մասնակցելու հնարա-

---

1 Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 17—20։

2 Մ. Եգանյան, Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964, էջ 29—30։

3 «Մեղու Հայաստանի», 26. IV. 1884։

վորությունից Հայաստանի «բարձր դասին» զրկելը նրա կողմից ոչ մի դրժգոհության կամ հավակնության տեղիք չտվեց։ Հետքն անգամ չկա այն բանի, որ նա դրսևոր առաջադրեր իր նախագծերը կամ որ նրա տարբեր խմբեր հանդես գային տարբեր նախագծերով»[4]։ Մ. Եգանյանը առարկելով այս պնդմանն, ու վկայակոչելով մասնավորապես Գևորգ IV-ի վերոհիշյալ նամակը, գրել է, որ «կալվածատերերը և հոգևորականությունը հենց սկզբից ընդդիմանում էին Հայաստանում հողային ռեֆորմի կենսագործմանը»[5]։ Ավելացնենք, որ կաթողիկոսի գրությունը հոգևորականության ընդդիմությունը վկայող միակ փաստաթուղթը չէ, և համոզիչ չէ Վ. Ռշտունու այն դիտողությունը, թե Մ. Եգանյանի մատնանշած փաստը «ո՛չ ռեֆորմի նախապատրաստման, և ո՛չ էլ նրա կենսագործման շրջանին է վերաբերում»[6]։ Սա ճիշտ է ձևականորեն։ Հարկավ, դժվար է ակնկալել ռեֆորմի նախապատրաստմամբ էջմիածնի շահադիտությունը վկայող որևէ հիշատակություն, քանի դեռ չէր շոշափվել նրա գյուղացիների «հողային կարգավորման» խնդիրը։ Սխալ կլիներ կարծել, թե հոգևորականության ընդդիմության պատճառներից մեկն էլ այն էր, որ, իբր, էջմիածինը զրկված էր «հողային կարգավորման» նախագծումներին մասնակցելու հնարավորությունից։

Ի տարբերություն մյուս հողատերերի, հայ բարձր հոգևորականությունը ներգրավվեց եկեղեցապատկան շինականների «հողային կարգավորման» նախագծմանն ու քննարկմանը հենց սկզբից։

Էջմիածնի գավառապետի «գաղտնի հավաքածո» տվյալներով[7] (1873 թ.), վանքի տնտեսական վիճակին ծանոթանալուց հետո, Երևանի նահանգապետը 1874 թ. սեպտեմբերին, Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության հանձնարարությամբ, հարց առաջադրեց հայոց հոգևոր սինոդին, թե արդյո՞ք ժամանակը չէ էջմիածնի վանքի գյուղերը հարկադրել պետական տուրքերով ու պարտավորություններով։ Վարչությունը հիշեցրել էր, որ 1836 թ. Եփրեմ կաթողիկոսի խնդրանքով Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Եղվարդ և Գետարգել գյուղերի պետական հարկաբաժինը որպես թիուլ տրվել է վանքին ոչ ընդմիշտ, այլ «մինչև հետագա հայեցողություն», նկատի ունենալով էջմիածնի տնտեսական վիճակը, որը չէր կարող չբարելավվել անցած 37 տարում[8]։ Այս հարցին տված իր պատասխաններում սինոդը մռայլ գույներով նկարագրեց վանքի ամենամյա ծախսերն ու տնտեսական խեղճությունը՝ նույնիսկ կարեկցանք հայցելով միաբանների նկատմամբ, որոնք, իբր, «յանչափս տառապեն յամենատեսակ կարեաց պիտոյից»[9]։

Բնորոշ է, որ էջմիածնի թիուլային եկամուտի խնդիրը դարձավ ինքնուրույն հարց, մինչդեռ նույն ժամանակ մշակվում էին և 1875 թ. մայիսի 14-ին հաստատվեցին կանոններ «Երևանի նահանգում թիուլային վճարումների ստացման կարգը փոխելու մասին»։ Փոխարքայության շինական գոր-

---

4 В. Рштунн, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван. 1947. стр. 225.

5 Մ. Եգանյան, նշվ. աշխ., էջ 29—30։

6 Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Բ, Երևան, 1968, էջ 184։

7 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 102, գ. 32, թ. 5, 9—11։

8 Նույն տեղում, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 1—2, 13—16։

9 Նույն տեղում, թ. 9—11, 23—25։

ծերի կարգավորման գլխավոր կոմիտեի և կովկասյան կոմիտեի միացյալ ատյանը էջմիածնի նկատմամբ արձանագրեց իրավաբանորեն առանձնահատուկ վիճակ։ Թիուլային իրավունքը հաստատվում էր ցմահ ժամկետով և նոր կանոններով պարտությունները ցմահ թոշակի կարգով փոխհատուցվում էին թիուլատերերին։ Մինչդեռ, 1836 թ. հունիսի 5-ի կայսերական հրովարտակը[10] էջմիածնի թիուլին ժամկետ չէր սահմանել, չնայած և չէր ճանաչել առհավեստության սկզբունքը, իսկ ցմահ ժամկետը գործնականում անկիրառելի էր հոգևոր հաստատության նկատմամբ։ Ատյանն այն նախնական կարծիքին էր, որ պետք է թույլատրել վանքին ստանալու թիուլային եկամուտները «սերնդե-սերունդ՝ հարգելի հիմունքով իբրև հատուկ վերապահություն ընդհանուր կարգից»[11]։ 1874 թ. մայիսի 9-ին Կովկասի փոխարքան իր հերթին հիշեցրել էր, որ «ուշադրության առնելով հատուկ դրությունը, որի մեջ գտնվում է այս վանքը... կայսրը հարմար ճանաչեց վանքապատկան գյուղերի հարցը քննարկել առանձին»։ Այսպիսով, հօգուտ էջմիածնի որոշակի դրական կարծիքով հարցը դուրս մնաց 1875 թ. մայիսի 14-ի կանոններից։ Շուտով (սեպտեմբերին), ատյանի հանձնարարությամբ, փոխարքայի գլխավոր վարչության շինական գործերի կարգավորման գրասենյակի առաջարկություններով կազմվեց վանքի գյուղերի «հողային կարգավորման» նախագիծ, որն արդեն վերաբերում էր ոչ միայն թիուլապարտությանը, այլև աթոռապատկան կալվածքների վրա 1870 թ. Կանոնադրության տարածմանն ընդհանրապես։ Դրանից հետո էջմիածինը դիմեց իրավաբանական և քաղաքական բնույթի ավելի ծանրակշիռ թվացող փաստարկումների։ Նա պնդում էր, որ եթե պարտադիր է 1870 թ. Կանոնադրության տարածումը եկեղեցու կալվածքների վրա, ապա դա «պետք է կատարվի ոչ այլ կերպ, քան օրենսդրաբար», առանձին կարգով, որովհետև վանքի իրավունքները հաստատող հատուկ օրենքը[12] առայժմ չի վերանայվել[13]։ Դա հարցի լուծումը ձգձգելու և փակուղի մտցնելու փորձ էր և, ըստ էության, կապվում էր Արևելքի այն ժամանակվա բարդ իրադրության գնահատման հետ, որի մեջ էջմիածնի գիրքը ցարիզմի քաղաքական շահերի տեսակետից որոշակի կարևորություն ուներ։ 1880 թ. մայիսի 20-ին Կովկասի փոխարքայի գլխավոր վարչությանն ուղղած նամակի մեջ կաթողիկոս Գևորգ IV-ը նշում էր, որ նախագծվող փոփոխությունները «զրկելով Աթոռը դարավոր իրավունքներից... կթուլացնեն նրա բարոյական նշանակությունն ու ազդեցությունը, որը ճնշող տպավորություն կթողնի հոտի վրա ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ուրիշ երկրներում, ուր սովոր են լիակատար ակնածանքով նայել ռուսաց կառավարությանը որպես արևելյան քրիստոնյաների եկեղեցական շահերի հովանավորի»։ Այլ խոսքով՝ փոփոխությունը կխախտեր ակնածանքը ռուսաց կառավարության նկատմամբ։ Զարդացնելով իր միտքը, կաթողիկոսը ավելացնում էր, որ «էջմիածինը պետք է դիտվի ոչ իբրև սոսկ մասնավոր սեփականատեր, այլ իբրև համազգային հաստատություն... ներկա հարցը այնքան կարևոր է, որ ես

---

10 «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею», т. VIII, Тифлис, 1881, стр. 298.

11 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 148։

12 «Свод законов Российской империи», т. XI, ч. I, изд. 1857 г., статья 1018.

13 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 103—104, 140—141։

գուցե և դժվարանամ անձամբ վճռելու այն ու թերևս անհրաժեշտ համարեմ միապետից թույլտվություն խնդրել... եկեղեցական ժողով դումարելու»[14]։

Դժվար է ասել, թե ինչն ավելի «ճնշող տպավորություն» կթողներ արևելյան քրիստոնյաների վրա՝ միանգամից եկեղեցու կալվածքների վերաբերյալ հատուկ օրենքի հրատարակո՞ւմը (որի հավանական «խեղաթյուրված ըմբռնումը» իրոք մտահոգում էր քաղաքական իշխանություններին), թե՞ հարցի քննարկումը եկեղեցական ժողովի մակարդակով։ Կառավարությունը խուսափեց թե՛ մեկից, թե՛ մյուսից։ Վերոհիշյալ նախագիծը ներկայացվեց իբրև «հատուկ հարգանքի արտահայտություն պատրիարքի նստավայրի նկատմամբ և հարցի առանձին լուծում», որը չէր սահմանափակում վանքի սեփականատիրական իրավունքները, այլ, ինչպես հավաստիացնում էին իշխանությունները, «կարգավորում» էր միայն նրա հարաբերությունները շինականների հետ։ Պաշտոնական մամուլը ներգրավվեց այդ միջոցառման «ճնշող տպավորությունը» մեղմելու գործում։ «Մեղու Հայաստանին» հաղորդում էր, որ «Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение»-ն և նրանից առնելով մյուս ռուսական թերթերը... խորհուրդ էին տալիս հայ լրագիրներին ծանոթացնել հայ ժողովրդին... իշխանության կարգադրության իսկական իմաստը, որպեսզի չկարծվի թե այն սահմանափակում է վանքի կալվածատիրական իրավունքը»[15]։

Ուշագրավն այստեղ հարցի զգուշավոր նախապատրաստման և դրանում մամուլի ներգրավման փաստն է, որն ինքնին բացահայտում է իշխանությունների մտահոգությունը խնդրի քաղաքական նշանակության շուրջը։

Ընդգծելով հայոց հոգևոր կենտրոնի քաղաքական նշանակությունը, իշխանությունները միաժամանակ պաշտոնական ներքին գրագրության մեջ չէին թաքցնում անբավականությունը կալվածատեր էջմիածնից։ Այս իմաստով բնորոշ են հիշյալ գրասենյակի ու նրա պետի՝ պատմաբան-տնտեսագետ Մ. Կուչևի նկատառումները, որոնցով «հիմնավորվում» էր ռեֆորմի տարածումը եկեղեցու կալվածքների վրա։

1836 թ. կայսերական հրովարտակը սահմանափակում էր վանքի թիուլային իրավունքը երկու պայմանով. ա) նա ժամանակավորապես՝ «մինչև հետագա հայեցողություն», օգտվում էր գյուղերի պետական հարկաբաժնից. բ) իրավունք չուներ ավելացնելու հարկաչափը։

Համեմատելով 1836 թ. ծխահարկի և տեղական հարկի գումարը (1119 ռ.) 1876 թ. հարկաչափի (3319 ռ.) հետ, ապա թվարկելով գյուղացիների «անձնական ծառայությունները» (վանքի ապահովումը սառույցով, շենքերի մարրումը ձյունից, բնահարկի տեղափոխումը և այլն), Մ. Կուչևը հարկերի բարձրացում էր տեսնում էջմիածնի կողմից ու եզրակացնում, որ «վանքի ու շինականների հարաբերությունները աննորմալ են. շինականները նրան պատկանող հողերին նստած են ճորտային իրավունքի սկզբունքով», երբ այն «վերացված է կայսրության բոլոր անկյուններում»[16]։ էջմիածնի գյուղերը պետական տեղական հարկից «ազատելը» (հօգուտ վանքի) որակվում էր իբրև

14 Նույն տեղում, թ. 103—104։

15 «Մեղու Հայաստանի», 26. IV. 1884։

16 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 72—74, 104—105։

«ալաղակող անարդարություն մյուս բնակիչների նկատմամբ», մինչդեռ վանքապատկան գյուղացու համար միևնույնն էր, թե ում է վճարելու այդ հարկը՝ վանքի՞ն, թե՞ պետությանը։

Անդրադառնալով վանքի կալվածքների կառավարման եղանակին, դրասնայակը կարծում էր, որ էջմիածինն անտեսել է օրենքը և չարաշահել կառավարության վերաբերմունքը հետևյալ իմաստով. 1852, 1869 և 1871 թթ. օրենքներով երկրամասի ուղղափառ եկեղեցու Վրաստանի, Իմերեթիայի, Գուրիայի և Մենգրելիայի թեմական վարչությունների կալվածքները եկամուտների ամենամյա դրամական փոխհատուցմամբ հանձնվեցին պետական կերատեսչությանը. նշված օրենքները շրջանցեցին էջմիածինը։ Այդ դիջումը, նշում էր Մ. Կուչաևը, որ պայմանավորված էր «Արևելքի քրիստոնյա բնակչության նկատմամբ մեր կառավարության քաղաքական նկատառումներով, չբացառեց այն աննորմալ վիճակը», որ էջմիածինը կալվածքները տալիս է կապալառուներին՝ հաշվի չառնելով նրանց դասային պատկանելությունը[17]։ Բայց պարզ է, որ շինականները չէին փրկվի շարիքից, եթե «հասարակ» կապալառուին փոխարիներ «բարձր դասին» պատկանող մեկը։ Դրասենյակը եզրակացնում էր, որ եթե հնարավոր է իբրև բացառություն հաշտվել «հոգևոր վարչության կողմից անշարժ գույք կառավարելու անհարմարության հետ», ապա էջմիածնի կալվածքների ու շինականների հարցը պետք է լուծել 1861 թ. ռեֆորմի հիմունքներով։

Նախագիծը, ինչպես Մ. Կուչաևն էր խոստովանում, տեղից չշարժվեց. դրա քննարկումը ընդմիջվեց ռուս-թուրքական պատերազմի տարիներին և վերսկսվեց 1880 թ.։ Ապա, կաթողիկոսի բացասական պատասխանից և նախագծի առանձին կետերի ձևակերպման առթիվ ծավալված երեքամյա քաշքշուկից հետո, 1883 թ. նոյեմբերին, փոխարքայի գլխավոր վարչության խորհուրդը հաստատեց նոր նախագիծ[18]։

Երկրորդ նախագիծը տարբերվում էր առաջինից՝ էջմիածնի օգտին արված հետևյալ բացառություններով. «Ա) Թիուլային բոլոր կալվածքների համար 1875 թ. կանոններով սահմանված 2 ռ. 50 կոպ. ծխահարկի փոխարեն նախատեսվում էր հարկաչափն ավելացնել մինչև ծխից 4 ռ. 50 կոպ., և ոչ թե ըստ 1836 թ. եղած ծխաթվի, այլ ըստ վերջին կամերալ ցուցակագրության, որի մասին միջնորդում էր պատրիարքը։ Բ) Թիուլային թոշակը էջմիածնի վանքին նախատեսվում էր սահմանել անժամկետ, Գ) շինականների անձնական ծառայությունների կարգման առթիվ վանքին նշանակվում էր դրամական փոխհատուցում՝ ծխի դիմաց 75 ռ. հաշվով, Դ) շինականների սուլքային պարտավորությունները թողնվում էին այն չափով, ինչ չափով նրանք այժմ վճարվում էին վանքին»[19]։

---

17 Նույն տեղում, թ. 74բ, 153։

18 Հարկ չկա քննելու վերոհիշյալ նախագծերի ընդհանուր դրույթները, քանի որ դրանք չէին տարբերվում 1870 թ. և 1875 թ. օրենքների հոդվածներից, որոնց հակագյուղացիական ուղղությունը բացահայտվել է Վ. Ռշտունու, Ծ. Աղայանի, Մ. Ադոնցի, Խ. Ավդալբեգյանի և այլոց աշխատություններում։ Չենք անդրադառնում նաև էջմիածնի կալվածքներում ճորտային իրավունքի տիրապետման մասին Մ. Կուչաևի անվերապահ հայտարարությանը։ Տվյալ դեպքում կարևոր են շեղումներն ընդհանուր կարգից և այն հարցերը, որոնք տարաձայնության հիմք ծառայեցին։

19 Նույն տեղում, թ. 153։

Մ. Կուչաևն այդ բացառությունները որակում էր որպես արքունի գանձարանին անհատույց կորուստ պատճառող զիջումներ, որոնք պայմանավորված էին «միայն պատրիարքական աթոռի նկատմամբ միշտ հատուկ հարգանք տածող կառավարության բարյացակամությամբ»[20]։ Բայց օրինախախտման համար էշմիածնին հանգիմանելով ու պետական միջոցների «անհատույց կորուստների» ակնարկումով պաշտոնական կողմը նպատակ ուներ կանխելու կամ մերժելու վանքի նոր պահանջները և սքողելու այն փաստը, որ «կորուստները» լիովին հատուցվում էին շինականների պարտություններով։

1830-ական թվականներին էշմիածնի վանքը իր գյուղերի յուրաքանչյուր ծխից վերցնում էր 2 ռ. 50 կ. ծխահարկ և 52 կ. տեղական հարկ[21]։ 1840 թ. երկրի բոլոր կարգի բնակիչների տեղական հարկը ավելացավ 14 կոպեկով[22]։ Իսկ երբ 1844 թ. արքունի գյուղերը հարկադրվեցին «ըստ տեղական պայմանների ու եկամուտների», էշմիածինն էլ իր գյուղացիների «կոռ ու բեգարը» սահմանեց 1 ռ. 75 կ. (ընդամենը՝ 2,50+1,75=4 ռ. 25 կ.)[23]։ Արդ, 32 տարի հետո «օրինապահ» իշխանությունները հիշեցնում էին, որ էշմիածնի գյուղերում դրամահարկը 3 ռ. 2 կոպեկից բարձրացել է 4 ռ. 25 կ.։ Ֆինանսների մինիստրությունը գտնում էր, որ «1836 թ. մինչև այժմ ապօրինաբար ավելացված հարկաչափի ընդհանուր գումարը ճիշտ կլիներ դիտել որպես պետական հատուցում վանքին՝ թիուլային պարտավորությունների դիմաց»։ Շինական ծխի ծառայությունների փոխարեն 75 ռ. պետական հատույցը նույնպես մինիստրությունը ավելորդ էր համարում, «քանի որ վանքը դրանցից օգտվել է շատ ավելի երկար ժամանակ (անընդմեջ — Ս. Ա.), քան մյուս հողատերերը»[24]։ Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր վարչությունը մինիստրությանը հանգստացնում էր հետևյալ հաշվարկով։ Ճիշտ է, հարկաչափը բարձրացել է, բայց վանքը չի խախտել օրենքը, քանի որ 1836 թ. 660 ծխի փոխարեն այն այժմ ունի 1041 ծուխ, իսկ դրանց դրամահարկը նույն 3 ռ. 2 կ. հաշվով կկազմի 3144 ռ., այսինքն՝ «այժմյան գումարից ընդամենը 175 ռ. պակաս»[25]։

Այսպիսով, ծխերի բնական աճի հաշվին մարվում էր պետական փոխհատուցման գումարի ենթադրվող կորուստը, մոռանալով, որ գյուղացին երկար տարիներ մուծել է 4 ռ. 25 կ. հարկ։ Արդարացի կլիներ գոնե հարկաչափի տարբերությունը (1 ռ. 23 կ.) դուրս դրել շինականների այն վճարումներից, որոնք շարունակվելու էին մինչև թիուլապարտույթի փոխհատուցման պահը։ Բայց այդ մասին նույնպես ոչ մի խոսք չկար, քանի որ ամեն ինչ ծրագրվում էր գանձարանի և վանքի եկամուտների անշեղ ապահովման համար։

Թիուլային ընատուրքի (բերքի 1/10-ի) փոխարեն վանքին նշանակվելիք թոշակի չափը որոշվում էր բնամթերքի վերջին 10 տարիների գների միջինով։ Գլխավոր վարչությունը նշում էր, որ «մոտավոր ճշտությամբ» թոշա-

20 Նույն տեղում։
21 Նույն տեղում, սինոդի օրագրություններ, թղթ. 1, վավ. 101։
22 Նույն տեղում, թղթ. 8, վավ. 501։
23 Նույն տեղում, ց. 11, թղթ. 3, վավ. 51, թ. 46։
24 Նույն տեղում, ց. 4, գ. 2727, թ. 148։
25 Նույն տեղում, թ. 148բ։

կի նվազագույնը մեկ դեսյատինից ստացվող բահրայի դիմաց կազմում է տարեկան 1 ռ. 20 կ., առավելագույնը՝ ծխական բաժնեհողից ստացվող բահրայի դիմաց տարեկան 18 ռ.։ Քանի որ վանքապատկան 1041 ծխից բաժնեհող ունեն 916-ը, նրանց զբաղեցրած 4125 դեսյատին պիտանի հողերից ստացվող բահրայի դիմաց թոշակի տարեկան գումարը կլիներ ընդհանուր նվազագույնի (4950 ռ.) և առավելագույնի (16488 ռ.) միջև։ Վարչությունը իրավացիորեն գտնում էր, որ դա «հազիվ թե ծանր լինի գանձարանի համար»։ Վանքին թոշակ նշանակելու պահից գանձարանի ծախսերը կկսեին մարվել շինականների պետական վճարումներով՝ տարեկան 2 ռ. ծխահարկով, 4 ռ. արքունի տեղական հարկով և 2 ռ. նահանգական տեղական հարկով (մյուս բնակիչներին հավասար 8 ռ. ընդհանուր գումարով)։ Գանձարանի տարեկան եկամուտը թիուլային պարտությունների հաշվին «առնվազն առաջին տարիներին» կկազմեր 8328 ռ., իսկ հետագայում, գոհունակությամբ դրում է կառավարիչը, ծխերի աճին համապատասխան «նրանց հարկունակությունը անկասկած կաճի»[26]։ Ահա թե թիուլային պարտության փոխարեն ում միջոցների հաշվին էր մուծվելու վանքին անժամկետ արտոնված թոշակը։

Անդրադառնալով շինականների անձնական ծառայությունների դրամական միանվագ փոխհատուցմանը, վարչությունը հիշեցնում էր, որ Կովկասյան կոմիտեի 1856 թ. դեկտեմբերի 29-ի կանոնադրության համաձայն այդպիսին (տարբեր չափերով) տրվել է նաև Թիֆլիսի, Քութաիսի և մյուս նահանգների կալվածատերերին, իսկ էջմիածինն այն ստանալու «ավելի մեծ իրավունք ունի... ուշադրության առնելով ամենայն հայոց պատրիարքական աթոռի հատկապես կարևոր քաղաքական նշանակությունը»[27]։

Սակայն անձնական ծառայությունների փոխհատուցումը կապվում էր վանքին հասանելիք մյուս բնապարտությունը՝ մուլք-տասանորդին հավելադիր բերքի 1/30-ի պահպանման կամ ղեղչման խնդրի հետ[28]։

Կովկասյան իշխանությունները մերժեցին այդ երկուսի զուգահեռ գանձման վերաբերյալ էջմիածնի պահանջը՝ առաջարկելով ընտրություն կատարել հոզարդյունքի 1/30-րդի և շինական ծխի ծառայության դիմաց նշանակված 75 ռ. միջև[29]։

Շինական հողաբաժինների հետգնումը եկեղեցական կալվածքներում պետք է կատարվեր ըստ 1870 թ. կանոնադրության 133—139 հոդվածների։

Նախագծի հեղինակ Մ. Կուչաևը կարծում էր, որ այս հարցում վանքապատկան շինականների վիճակն ավելի նպաստավոր էր, որովհետև արական շնչի բաժնեհողի նորման սահմանված 5 դեսյատինից այստեղ իբր բարձր էր։ Հաշվարկը նա կատարել էր Վաղարշապատ, Օշական և Եղվարդ գյուղերի բոլոր հողատեսքերի 24466 դեսյատինից դուրս թողնելով Մաստարան, ուր

---

26 Նույն տեղում, թ. 149։

27 Նույն տեղում, թ. 149բ։

28 Մինչև 1870 թ. Կանոնադրության գործադրումը, էջմիածնի վանքին վճարվող մուլքն ու թիուլը միասին կազմում էին վանքապատկան հինգ գյուղերի ամենամյա հոզարդյունքի 6/30-ը, այդ՝ հարկը՝ սոմարից 1 ռ. 20 կ., բոստանների ու պարտեզների հարկը՝ սոմարից 80 կ.։ Երկրորդ նախագծով ընդունվեցին հարկերի նշված չափերը, իսկ բնահարկի 1/30-րդ «հավելումը», որը 1829 թ. շնորհված էր հողատերերին Կովկասի կառավարչապետ Պասկևիչի կողմից («Акты...», т. VII, Тифлис, 1878, стр. 494), դարձավ վեճի առարկա։

29 Այս հարցի մանրամասն քննությունը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 9, էջ 18—25։

հողաբաժանությունը 1875 թ. դեռ ընթացքի մեջ էր[30]։ Մաստարա և Մուղնի գյուղերի հողերն էլ հաշվելու դեպքում միայն այդ թիվը կմոտենա 1898 թ. պաշտոնական տվյալին՝ բոլոր 5 գյուղերում 25735 դեսյատին, որի մեջ մտնում էին նաև արոտավայրերը, ճանապարհները, գերեզմանոցները, ավերակները և այլն[31], մինչդեռ ցանքահողերն ու այգիները միասին կազմում էին 8767 դեսյատին։

Բայց Կանոնադրության 12—14-րդ կետերով շինական հողաբաժնի չափը որոշվում էր «միմիայն հարմար հողերի», աղուտների (հարմար հողի մեկ դեսյատինի դիմաց 3 դեսյատին) և մշտական օգտագործման տակ գտնվող թփուտների ու եղեգնուտների հաշվին[32]։ Ինչպես տեսանք, էջմիածնի գյուղերի հողերից պիտանի էր 4125 դեսյատինը, որով և հաշվվում էր բնատուրքի փոխհատուցման գումարը։ Հետևաբար, վանքապատկան 1045 ծխերից յուրաքանչյուրի բաժնեհողի միջին չափը 5 դեսյատինի չէր հասնելու։ Ե՛վ մի ապացույց Խ. Ավդալբեգյանի այն իրավացի պնդման, որ «ամբողջ Արարատյան դաշտում ոչ միայն արական շնչին, այլև ծխին էլ միջին հաշվով 5-ական դեսյատին մշակելի հող համարյա չէր ընկնում»[33]։

Էջմիածինը ձգտում էր կանխել հետգնման ամեն մի հնարավորություն։ Դրան էր ուղղված Էջմիածնի պահանջը՝ բնատուրքը բերքի 6/30-ի փոխարեն 7/30, այդեհարկը սոմարից 1 ռ. փոխարեն 1 ռ. 20 կ. սահմանելու և շինականներից դարմանի հարկ վերցնելու մասին, որովհետև բաժնեհողի հետգնման գումարը որոշվելու էր պարհակների տարեկան միջին գների 6% կապիտալացման ($16^2/_3$-ով բազմապատկելու) միջոցով։

Հետաքրքիր է մյուս պահանջը. առանձին ծխերի փոխարեն հետգնման իրավունք տալ ամբողջ համայնքին՝ պետական դրամատնից շինականների միանվագ վարկավորման սկզբունքով։ Այս առթիվ Էջմիածնի սինոդի հավատարմատար Վ. Եղիազարյանցը կաթողիկոսին զգուշացնում էր, որ առանձին ծխերի փրկանքագումարների հատուցումը անորոշ ժամկետներով և «ի զանազան ժամանակի դղրդեսցէ ի հիմնէ զնիւթական բարեկեցութիւն վանից»[34]։ Մյուս կողմից, Էջմիածնի սինոդը հիշեցնում էր, որ 16 տարում՝ «1870 թ. Կանոնադրության գործադրումից մինչև այժմ (1886 թ. — Ս. Ա.) Անդրկովկասում չի արձանագրված հետգնման ոչ մի դեպք՝ շինականների միջոցների սղության պատճառով»[35]։ Տվյալ դեպքում, դա թերևս կարելի լիներ համարել Էջմիածնի նախագծի միակ դրական կետը, եթե հիշենք, որ փոխօգնություն չստանալով, Հայաստանի շինականները տասնամյակներ շարունակ իսպառ չունեցան բաժնեհողերի հետգնման հնարավորություն։ Բայց դա էլ հեռու չէր հարցը փակուղի մտցնելու դիտավորությունից։ Նախ՝ աներևակայելի էր կառավարությունից նման բացառության ակնկալումը։ Մյուս կողմից, էջ-

30 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 71, 73—74։

31 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 58, թ. 61։

32 Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Բ, էջ 57—58։

33 Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 260։

34 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 63։

35 Նույն տեղում, թ. 144։

միածնի այդ առաջարկը հիմնովին նշանակազրկվում էր սինոդի նախագծի մյուս կետով։

Սկզբում էջմիածինը հավակնում էր բացառություն անել 1870 թ. Կանոնադրության 9-րդ հոդվածի այն պահանջից, ըստ որի եթե հողատիրոջ բաժինը ավելին էր հարմար հողերի 1/3-ից, ապա ավելցուկն անցնում էր շինականներին, պատճառաբանելով որ այդ հողերով գոյություն են պահպանում Շողակաթի, Հռիփսիմեի և Գայանեի մենաստանները։ Բայց էջմիածինն այստեղ էլ կանգ չառավ և առաջարկեց ընդունել, որ շինականները մշտապես օգտագործելու են տվյալ պահին ունեցած հողաբաժինները, իսկ «մյուս հողերը, արտերը... կազմելով եկեղեցու բացառիկ սեփականություն» մնում են նրա անմիջական տնօրինման և օգտագործման տակ[36]։ Այդ նշանակում էր ծխերի ժառանգական օգտագործմանը տրամադրված հողային ֆոնդը առկա սահմանափակ շրջագծում անփոփոխ պահել և, ինչպես նկատում էր փոխարքայի գլխավոր վարչության խորհուրդը, անհող շինականներին ղրկել «ազատ մնացած հողերից ժառանգական մասեր ստանալու իրավունքից»[37]։ Ավելին, այդ նշանակում էր վանքապատկան շինականների «հողային կարգավորումը» դուրս չբերել հողի ֆեոդալական-ճորտատիրական վարձակալման հետամնաց ձևերի շրջանակից, շինականին թողնել վարձակալի անօգնական վիճակում՝ հողատեր վանքին դեմճանդիման։ Սա այն հիմնական հարցն էր, որի լուծման մեջ, մեր կարծիքով, առավել ցցուն էր դրսևորվում գյուղացիական ռեֆորմի նկատմամբ էջմիածնի վանքի, որպես խոշոր հողատիրոջ և ֆեոդալական շահագործման հիմքերը նույնությամբ պահպանողի, վերաբերմունքը։

Ռեֆորմի առթիվ իր նախագծումները (բացառյալ թիուլապարտությունն վերաբերող) էջմիածինն հավակնում էր իրագործել նաև Գանձակի և Բաքվի նահանգների, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի և Ախալցխայի գավառների և Երևանի նահանգի այլ վայրերի հայոց եկեղեցական կալվածքներում։ Բայց հարցի նախապատրաստման սկզբից երկու պատճառաբանությամբ առարկվում էր 1870 թ. Կանոնադրության տարածումն այդ կալվածքների վրա։ Նախ՝ ռեֆորմի տարածման շրջանակը սահմանող Կանոնադրության առաջին հոդվածում ու դրա ծանոթագրություններում ոչ մի խոսք չկար դրանց մասին։ Ապա՝ էջմիածինը վկայակոչում էր «հայ-լուսավորչական դավանության քրիստոնյաների հոգևոր գործերի վարչության գործող օրենքները», որոնք սահմանում էին «ա) որ հայ-լուսավորչական եկեղեցու գույքի կազմում մտնում են, ի միջի այլոց, վանական և եկեղեցական շինությունները, բնակելի և անբնակ հողերը և բ) որ այդ գույքերը չնայած և նախատեսված են առանձին վանքերի ու եկեղեցիների կամ դրանց կից աստվածահաճո (բարեգործական — Ս. Ա.) հիմնարկների պահպանման համար, կազմում են հայ-լուսավորչական եկեղեցու ընդհանուր սեփականությունը»[38]։ Հետևաբար, պնդում էր սինոդը, եթե աթոռապատկան հինգ գյուղերի համար մասնակի կարգով կազմվում է նախագիծ, ապա այն պետք է տարածվի նաև վերոհիշ-

36 Նույն տեղում, թ. 136։

37 Նույն տեղում, թ. 137։

38 «Свод законов...», т XI, ч. I, изд. 1857 г., статьи 1009, 1010.

յալ մյուս կալվածքների վրա[39], հասկանալի է՝ այն պահանջների հաշվառումով, որոնք առաջադրեց էջմիածինը նախագծի կապակցությամբ։ Մինչդեռ, պաշտոնական կողմը բացառություն ընդունում էր անմիջապես աթոռապատկան կալվածքների վերաբերմամբ, որքանով որ 1836 թ. հրովարտակը «հատուկ» հարցաղրման հիմք էր տալիս միայն էջմիածնի հինգ գյուղերի հողային կարգավորման համար։

Փոխարքայի խորհուրդը 1879 թ. դեկտեմբերի 13-ին Թիֆլիսի նահանգապետին առաջարկեց 1870 թ. կանոնադրության համաձայն անցնել Ախալցխայի հայոց հոգևոր գերատեսչությանը պատկանող կալվածքների կանոնագրերի կազմմանը։ 1882 թ. դեկտեմբերի 31-ին վոխարքայի գլխավոր վարչության պետը նույնպիսի առաջադրանք տվեց Գանձակի նահանգապետին[40]։ Իսկ Երևանի նահանգական գյուղացիական գործերի ատյանը համանման որոշում ընդունեց ավելի ուշ՝ 1886 թ. դեկտեմբերի 3-ին, Մեհրաբլու, Մեհրաբ-Թափաբաշ և Մեհրաբ-Քյուրգքյանդ գյուղերում Գեղարդի վանքի կալվածքների (3 ախչա) և Նախիջևանի Կարմիր վանք գյուղում նույնանուն մենաստանի կալվածքի (6 ախչա) վերաբերյալ[41]։

Այսպիսով, 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը 1879, 1882 և 1886 թթ. տարածվեց վերոհիշյալ եկեղեցական կալվածքների վրա։

Արխիվային նյութերից երևում է, որ, ինչպես ամենուր, այդ կալվածքներում նույնպես հաշտարար միջնորդների, եկեղեցու և շինականների եռակողմ վեճերի պայմաններում կանոնագրերի կազմումը ընթանում էր ձգձգումներով։ Ընդ որում, հոգևոր գերատեսչությունները, կանոնագրերի առթիվ առաջադրելով կոնկրետ պահանջներ, միաժամանակ սինոդի հետ միասին շարունակում էին բողոքարկել 1870 թ. ռեֆորմի տարածումը եկեղեցական կալվածքների վրա[42]։ Բնորոշ է, օրինակ, որ 1885 թ. Տաթևի վանքի տասը գյուղերից[43] միայն Խոտը և Շինուհայրն ունեին կանոնագրեր՝ հաստատված Գանձակի նահանգական գյուղացիական գործերի ատյանում։ Բայց դրանք էլ բողոքարկվում էին և վերջնականապես «ուժի մեջ թողնվեցին» միայն կառավարող սենատի 1890 թ. մարտի 28-ի որոշմամբ[44]։

Իսկ աթոռապատկան հինգ գյուղերի հարցը կրկին քննվեց Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչի խորհրդում, 1887 թ. ապրիլի 23-ին։ Պահպանելով էջմիածնին տրված արտոնությունները և մերժելով վերևում շարադրված նոր պահանջները, խորհուրդը հարցը ներկայացրեց

---

39 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 63, 140—141, 144—145։

40 Նույն տեղում, թ. 149—150։

41 Նույն տեղում, գ. 3262, թ. 2—4, գ. 2727, թ. 145—146։ Մեզ առայժմ պարզ չէ, թե ծավալուն զրագրության մեջ (1874 թ. մինչև 1891 թ.) ինչո՞ւ ոչ մի խոսք չկա Սևանի մենաստանին պատկանող Գոմաձոր և Ցամաքաբերդ գյուղերի մասին, չնայած Երևանի նահանգական գյուղացիական գործերի ատյանի 1886 թ. դեկտեմբերի 3-ի արձանագրության մեջ կոնկրետ նշվում են նահանգի հաշտարար բաժիններում վանքերին պատկանող կալվածքները։

42 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3262, թ. 16—23, գ. 3113, թ. 27—41 և այլն։

43 Երևանի հոգևոր թեմի Տաթևի հաշորդության վանական կալվածքների 1886 թ. ցուցակում որպես Տաթևի վանքի «անվեճ կալվածք» հիշվում են Տաթև, Տանձատափ, Լծեն, Հալիձոր, Շինուհայր, Խոտ, Աղքյանդ, Ղարաքիլիսա, Քիրս, Հյուճուքի և Գավթիկհուկ գյուղերը, վիճելի՝ Տաստակերտ, Բնունիս, Թաս (Խասիկ կամ Խաս), Բերդիկ գյուղերը (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3199, թ. 96—99)։

44 Նույն տեղում, գ. 3113, թ. 84—86։

ներքին գործերի մինիստրին[45]։ Տաթևի վանքի կալվածքների առթիվ սենատի հիշյալ որոշումից մասնավորապես տեղեկանում ենք, որ էջմիածնի հինգ գյուղերի «հողային կարգավորման» խնդիրը 1890 թ. դեռևս դուրս չէր եկել պաշտոնական գրագրությունից։ Ցավոք, մեր ձեռքի տակ եղած նյութերից չի երևում, թե կոնկրետ ի՞նչ ընթացք ստացավ հարցի քննարկումը հաշորդ տասնամյակում՝ մինչև 1903 թ. հայոց եկեղեցական գույքի բռնագրավումը։ Բայց հայտնի իրողություն է, որ այդ տասնամյակում նույնպես էջմիածնի գյուղերի «հողային կարգավորման» ուղղությամբ գործնական ոչ մի քայլ չձեռնարկվեց։ Ավելին, հարցը վերջնական լուծում չստացավ նույնիսկ սկզբունքորեն՝ կովկասյան իշխանությունների ակնկալած «հարմար պահին» արդեն պատրաստի ծրագիրը իրագործելու համար։ Եվ եթե «սկզբունքի» մշակումը (ավարտուն նախագծի տեսքով) ձգձգվեց ակնհայտ բյուրոկրատական քաշքըշուկով, ապա «հարմար պահն» էլ չգտնվեց 1870—1890-ական թվականների քաղաքական բարդ իրադրության մեջ։ Այս կապակցությամբ Մ. Կուչևի հետևյալ նկատառումները, անտարակույս, ուժի մեջ էին ցարական պաշտոնական շրջաններում մեզ հետաքրքրող ամբողջ ժամանակահատվածում։ 1883 թ. հոկտեմբերի 15-ին Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչի խորհրդին ներկայացրած զեկուցագրում նա գրում էր. «Ցնայած էջմիածնի կալվածքների նկատմամբ գյուղացիական ռեֆորմի կիրառումը ներկայանում է իբրև միանգամայն ցանկալի գործ... այնուամենայնիվ չի կարելի նաև տեսադաշտից դուրս թողնել այն, որ էջմիածնի վանքը որպես պատրիարքի աթոռատեղի ունի հատուկ քաղաքական նշանակություն, որի պատճառով նա առանձնանում է հողասեփականատերերի ընդհանուր տիպից և որ արևելյան քրիստոնյաներին հովանավորելու մեր կառավարության քաղաքականության պայմաններում չափազանց անցանկալի կլիներ, եթե շինականների կացությունը բարելավելու կառավարության բարի նպատակը մեկնաբանվեր խեղաթյուրված մտքով և դրանով ստեղծվեր թուրքական կայսրությունում բնակվող ազգերի նկատմամբ գոյություն ունեցող առանց այդ էլ բարդ քաղաքական հարաբերությունների բարդացման նոր շարժառիթ։ Ուստի ավելի զգուշավոր է թվում միջնորդել ներկա հարցի լուծման մասին լոկ սկզբունքորեն՝ իրավունք վերապահելով Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետին էջմիածնի կալվածքներում գործողության մեջ դնելու 1870 թ. Շինական կանոնադրությունը և թիուլային տուրքերի ստացման կարգը փոխելու մասին կանոնները... ելնելով ինչպես հաստատություններին պատկանող կալվածքների մասին կանոններից, այնպես էլ տեղական պայմանների պահանջներից։ Հավասարապես և թիուլապարտույթների հետգնումը դրամական փոխհատուցմամբ... ներկայումս կարող է ծանր լինել պետական գանձարանի միջոցների համար, ուստի օգտակար կլիներ, գոնե լոկ սկզբունքորեն, կառավարության իրավունքը համարել թիուլապարտույթների դիմաց ամենամյա թոշակը փոխարինել 6% կապիտալացված գումարով, երբ նա հարմար կճանաչի, հօգուտ էջմիածնի»[46]։

Պաշտոնական գրագրությունից և այստեղ արված մեջբերումներից դժվար չէ համոզվել, որ Մ. Կուչևի նկատառումները արտահայտում էին իշ-

---

45 Նույն տեղում, գ. 2727, թ. 136—138։

46 Նույն տեղում, թ. 105 (բնագրային ընդգծումները մերն են—Ս. Ա.)։

խանությունների կարծիքը՝ խնդրի քաղաքական նշանակության վերաբերյալ։ Այդ հանգամանքն էլ, տվորական քաշքշուկի և Էշմիածնի դիմադրության հետ միասին, վանքի ու գյուղացիների հարաբերությունների «կարգավորման» ու բաժնեհողերի հատկացման հարցը ավելի քան քառորդ դար (սկսած 1875 թ.) պահեց վարույթում և, վերջապես, անավարտ թողեց թղթի վրա։

ВОПРОС О ВОСТОЧНОАРМЯНСКИХ ЦЕРКОВНЫХ ИМЕНИЯХ В 1870—1880-х ГОДАХ

САМВЕЛ АЛЕКСАНЯН

Резюме

Распространение действия Положения от 14 мая 1870 г. на крестьян, живших на землях армянской церкви, было для царских властей делом, имеющим важный политический аспект, требующим особой осторожности.

В официальной переписке предсказывались «вероятное искаженное толкование», — будто крестьянская реформа ограничит землевладельческие права церкви, и невыгодный для России резонанс такого понимания «среди христиан, населявших восточные страны». Об этом предупреждал и Эчмиадзинский престол, который, однако, первым считал, что проектируемые «изменения» на самом деле нанесут материальный ущерб церкви, нарушат ее права. Не добившись особого законодательного акта об «урегулировании монастырских имений», он предлагал властям свои проекты, которые, как и официальные, обходили интересы крестьян. Ряд вопросов стал предметом долгих споров.

В результате всего этого действие Положения 1870 г. в 1879, 1882 и 1886 гг. было распространено только на часть церковных имений и крестьян. Вопрос деревень Эчмиадзинского монастыря не был окончательно подготовлен даже в принципе, чтобы в «удобный момент», как полагали власти, осуществить его. Проекты так и остались на бумаге.